«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ժողովրդավարական կարողունակությունների զարգացումը հայոց պատմության դասին

ԱՌԱՐԿԱ	Հայոց պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Անի Ալեքսանյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ճարճակիսի միջնակարգ դպրոց

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան **6-8**րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ **, 3.** Համացանց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3+4

Ժողովրդավարական կարողունակությունների զարգացումը հայոց պատմության դասին ---------- 5-14

Հայոց պատմության դասի օրինակելի պլան ----------14-17

Եզրակացություն----------17-19

Գրականություն ----------19-20

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է պետական կրթության գործող չափորոշչում,՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը։ ,Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, ժողովրդավարական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ժողովրդավար հասարակություն: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության զարգացումը

1,Հանրակրթական պետական չափորոշիչ

2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

սովորողների մոտ նպաստում է ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն.

Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ժողովրդավարական կարողունակությունների արժեքային համակարգը Հայոց պատմության դասերին։ Չ՞է,որ հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը :

Ժողովրդավարական կարողունակությունների զարգացումը Հայոց պատմության դասին:

20-րդ դարի փորձառությունը ցույց տվեց, որ ժողովրդավարությունը միանշանակ ըմբռնել և հասկանալ հնարավոր չէ, և ժողովրդավարությունն էլ միանշանակ գնահատականի արժանացած վարչակարգ չէ։ Ժողովրդավարությունը որքան հին է, այնքան էլ նոր է։ Այս տեսակետից է, որ ժողովրդավարությունը միանշանակ գնահատկանի չի կարող արժանանալ, քանի որ իր հին ու նոր պատմությունը, ինչ-որ իմաստով ընդհատված և ինչ-որ իմաստով անընդհատ պատմության ընթացքում իր հետ բերել է ոչ միայն դրական, այլև ժողովրդացման գործընթացը պայմանավորել է բացասական հետևանքներ։ ,Ժողովրդավարություն եզրույթը առաջացել է Հին Հունաստանում, մասնավորապես՝ Աթենքի քաղաք-պետությունում Ք.ա.V դարում։ Պլատոնի կարծիքով՝ ժողովրդավարական վարչակարգում բոլոր կարևոր արժեքները պղծվում են, մարդկանց ուղղորդում են իմացական մոլորությունները, և մարդիկ բնորոշվում են բարոյական աղճատմամբ, քանի որ ամեն ինչ թույլատրելի է, և կանոնները՝ խախտելի:

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

Պլատոնի համոզմամբ այս կատարյալ ազատությունն ու կատարյալ հավասարությունը հանգեցնում են նրան, որ բոլոր մարդիկ կարող են անել այն, ինչ ուզում են. կարող են ենթարկվել կանոններին, կարող են չենթարկվել, և ժողովրդավարությունը մի կառավարման ձև է, որտեղ կարծես ինչպես շուկայում կգտնեք բոլոր կենսաձևերը, կառավարման հնարավոր բոլոր տարբերակները: Եվ քանի որ ով ինչ ուզում, այն էլ անում է, բոլոր երևույթները դառնում են խնդրահարույց:

Չերչիլն ասել է. ,Ժողովրդավարությունը լավագույնն է վատագույն վարչակարգերի մեջե: Ի դեպ, Արիստոտելը կարծում էր, որ վատ վարչակարգերի մեջ ժողովրդավարությունը լավագույնն էր: Նշենք, որ վատ վարչակարգերը երեքն էին՝ բռնապետությունը, օլիգարխիան և ժողովրդավարությունը:

Ժողովրդավարության հիմնական սկզբունքներից են՝

- **Հավասարություն:**
- **Քաղաքացիների մասնակցությունը:**
- **Ընտրություններ:**
- **Հաշվետվողականություն և թափանցիկություն:**
- **Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ:**

Ժողովրդավարության առանցքային ինստիտուտներն են օրենսդիր, գործադիր, դատական մարմինները և դրանց հստակ տարանջատվածությունը և անկախությունը: Իշխանության չորրորդ ճյուղ են համարվում լրատվամիջոցները, որոնք նույնպես կարևոր բաղադրիչ են ժողովրդավարական վարչակարգում բազմակարծություն ապահովելու հարցում:

Մեր խնդիրն է սովորողներին պատրաստել՝ դառնալու ակտիվ, հաղորդակից և պատասխանատու անհատներ: Ժամանակակից աշխարհում է՛լ ավելի կարևոր է, որ մեր երեխաները զինվեն այնպիսի արժեքներով, վերաբերմունքով, հմտություններով, գիտելիքով ու քննադատական ըմբռնմամբ, որոնք նրանց հնարավորություն կտան կայացնել իրենց ապագայի վերաբերյալ պատասխանատու

որոշումներ:

Կրթական համակարգերի, դպրոցների ու համալսարանների հիմնական առաքելություններից մեկը պետք է լինի նախապատրաստումը ժողովրդավարական քաղաքացիությանը: Սա նշանակում է հետևել, որ սովորողներն իմանան և հասկանան իրենց առջև ծառացած մարտահրավերները և իրենց որոշումների հետևանքները, թե ի՞նչ են իրենք ի վիճակի անել և ի՞նչ չպետք է անեն: Այս ամենի համար նրանց անհրաժեշտ է ոչ միայն գիտելիք, այլ նաև համապատասխան կարողունակություններ (կոմպետենցիաներ): Եթե սխեմատիկորեն պատկերենք կարողությունների մոդելը ժողովրդավարական մշակույթում, ապա կստանանք հետևյալ պատկերը.

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ԿՈՄՊԵՆՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՄՈԴԵԼԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

ԱՐԺԵՔՆԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

– Արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները

– Արժևորել մշակութային ազմազանությունը

– Արժևորել ժողովրդավարությունը, արդարադատությունը, արդարությունը, հավասարությունը, օրենքի գերակայությունը

– Անկանխակալ վերաբերմունք այլ մշակույթների, համոզմունքների, աշխարհայացքների և սովորույթների նկատմամբ

– Հարգանք

– Քաղաքացիական մտածողություն

– Պատասխանատվություն

– Ինքնակառավարման արդյունավետություն

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

– Հանդուրժողականություն անորոշության նկատմամբ

Կարողունակությունների վրա հիմնված կրթական ծրագիրն, այսպիսով, նպատակների վրա հիմնված կրթական ծրագրի զարգացման դրսևորումն է: Կրթական ծրագիրն ուսումնառության պլան է, որը որպես կանոն ձևակերպված է հետևյալ կերպ՝ ,ինչ են կարողանում անելե սովորողներն ուսման ավարտին՝ տվյալ առարկայական կարողունակությունների կամ մի քանի առարկաների կամ բոլոր առարկայական խմբերի կարողունակությունների մասով: Կարողունակությունները (արժեքներ, վերաբերմունքներ, հմտություններ և գիտելիք ու քննադատական ընկալում) համարվում են փոխկապակցված: Կոմպետենտ գործելու համար անձը գործի է դնում տվյալ իրավիճակին համապատասխան արժեքներ, վերաբերմունք, հմտություններ և գիտելիք ու քննադատական ընկալում, օրինակ՝ որևէ երևույթ մեկնաբանելու, որևէ հիմնախնդիր վերլուծելու և լուծելու կամ այլընտրանքային լուծումներ առաջարկելու նպատակով:

Ժողովրդավարության մշակութային կարողությունների մոդելն ընկալվում է կարողունակությունների վրա հիմնված կրթական ծրագրի մոտեցման շրջանակներում, սակայն գործնականում այս մոտեցումներից և ոչ մեկը գոյություն չունի բացառիկ/անհատական կամ ,մաքուրե վիճակում:

Կրթական ծրագրերը/ուսումնական պլանները կարելի է կազմակերպել նաև միջառարկայական կարողունակությունների հիման, օրինակ՝ ժողովրդավարական կարողունակություններ, հաղորդակցության կարողունակություններ, ուսանել սովորելու կարողունակություններ: Կրթական ծրագրի նպատակներն ու դրա բովանդակության ընտրությունը մասամբ պայմանավորված են ժողովրդավարության և մարդու իրավունքների սկզբունքներով. որպես հետևանք՝ կրթական ծրագիրը կողմնորոշված ու կապակցված է առօրյա կյանքի իրավիճակներին ու համատեքստերին, որտեղ սովորողներն ու ուսուցիչներն ապրում են միասին: Ժողովրդավարական մշակույթի կարողության մոդելն, ըստ էության, լավագույնս կիրառվում է

կարողունակությունների վրա հիմնված կրթական ծրագրերում: Այս մոտեցման պարագայում կրթական ծրագրի նախագծի/կառուցվածքի կենտրոնում ուսումնառությունն է. այսինքն՝ սովորողներն են կրթական ծրագրի բաղադրիչների ընտրության առանցքում:

Ժողովրդավարական մշակույթի կարողություն զարգացնելու նպատակով կան մի շարք սկզբունքներ: Դրանք են՝

- **Համապատասխանություն/արդիականություն**
- **Խուսափել կրթական ծրագիրը ծանրաբեռնելուց**
- **Կապակցվածություն և թափանցիկություն**
- **Ուղղահայաց և հորիզոնական կապ**
- **Ժողովրդավարության մշակույթի կարողունակությունների պրոգրեսիան-**
- **Լեզվական և երկխոսության տիրույթ**
- **Ապահով միջավայրեր ժողովրդավարության մշակույթի**

կարողունակություններ սովորելու համար:

Կարողունակությունների խմբավորում

Ժողովրդավարական մշակույթի կարողունակություններն, այնուհետ, կարելի է համարել առանցքային կարողունակություններ, որոնք պետք է զարգացնել կրթական ծրագրի բոլոր առարկաների և ուսումնական բնագավառների հարթությունում: Ժողովրդական մշակույթի կարողությունների մոդելը կիրառելիս պետք է առաջնորդվել կրթական համակարգի չափորոշիչների և ծրագրերի

անհրաժեշտությամբ, և կոնկրետ համատեքստում ամենաարժեքավորը

ժողովրդավարական գիտելիքի և կարողունակությունների բնույթի վերաբերյալ որոշումներն են:

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

Ժողովրդավարական կարողունակություններն ուսուցանելու և ժողովրդավարական մշակույթը կրթական հաստատությունում զարգացնելու համար ուսուցիչները պետք է համակարգեն և միասին աշխատեն՝ կազմակերպելու այնպիսի ուսումնական իրավիճակներ, որտեղ սովորողները կարող են յուրացնել և գործնականում կիրառել Ժողովրդավարության մշակույթի կարողունակությունները: Սա այն դեպքն է, երբ Ժողովրդավարության մշակույթի կարողունակություններ մոդելն օգտագործվում է խաչվող կարողունակությունների զարգացումը պլանավորելու համար և երբ ուսումնական հաստատությունների մակարդակում ուսուցիչները հանդես են գալիս որպես կրթական ծրագրերը պլանավորողներու իրականացնողներ:

ժողովրդական մշակույթի կարողությունները կարելի է դասավանդել, սովորել և գնահատել ժողովրդավարական, միջմշակութային և իրական կյանքից վերցված հարցերի միջոցով: Այս հարցերը դասավանդելիս շատ կարևոր է դասապրոցեսում քննարկման ու բանավեճի համար ապահով միջավայր ստեղծելը և խաղաղ եղանակով հնարավոր կոնֆլիկտներն ու տարաձայնությունները լուծելը: Ուսուցիչները՝ որպես ուսումնառության առաջնորդներ, պլանավորում են կրթական աշխատանքներն այնպես, որ ներառեն հետևյալ հնարավորությունները.

Փորձառություն. հարգալից և անաչառ մոտեցումները, ինչպես նաև ապրումակցումը զարգացնելու հարմար եղանակ է փորձառության միջոցով սովորելու հնարավորությունների ընձեռումը, որը կարող է լինել կա՛մ իրական, կա՛մ երևակայական. Սովորողները կարողանում են՝ խաղերի, վարժությունների, ավանդական մեդիայի և սոցիալական ցանցերի, դեմ-առ-դեմ շփումների կամ հաղորդակցության միջոցով զգալ այս վերաբերմունքները: Ուսուցիչները կարող են գրքեր ընտրել իրենց աշակերտների համար կամ կազմակերպել նրանց շփումը համայնքի, այլ թաղամասերի, տարածաշրջանների և երկրների հետ՝ ֆիզիկապես կամ առցանց համատեքստերում. նրանք կարող են միջոցառումներ և միջազգային հանդիպումներ կազմա-կերպել երիտասարդների հետ: Օրինակ՝ պատմության ուսուցիչները կարող են ծրագրերի թատերական վերարտադրություններ կամ միջոցառումներ կազմակերպել, որոնք կզարգացնեն

բազմահեռանկար մոտեցումները: Այս բոլոր օրինակները կարող են համեմատության և վերլուծության միջոցով սովորելու հնարավորություններ ընձեռել:

Համեմատում/համեմատություն. սովորողները կշահեն, եթե ենթակա լինեն ,տարբերություններին: Սովորողները հաճախ համեմատում են անծանոթ երևույթը՝ ծանոթի հետ, և անծանոթ երևույթները որակում են որպես ,խայտառակություն, ,ավելի վատ կամ անգամ՝ ,ոչ քաղաքակիրթ: Հարկ է, որ ուսուցիչները տեղյակ լինեն արժեքների այսօրինակ համեմատությանը և այն փոխարինեն ,համեմատում՝ հանուն իմացության մոտեցմամբ, ինչը ենթադրում է նմանություններն ու տարբերություններն առանց գնահատական տալու տեսնելն ու դիմացինի տեսակետը ընդունելը: Այլ կերպ ասած՝ սովորողներին կարելի է խրախուսել, որպեսզի նրանք զարգացնեն իրենց ընկալումն այն մասին, թե ինչպես է, որ իրենց համար նորմալ համարվող երևույթը կարող է խայտառակ մի բան համարվել մեկ ուրիշի կարծիքով և հակառակը, և որ երկու մոտեցումն էլ պարզապես տարբերվում են միմյանցից ինչ-որ առումներով և նման են իրար այլ առումներով: Այսպիսով սովորողները մտազննում և իրենց արժեքներն ու մոտեցումները գիտակցաբար համեմատում են տարբերվող արժեքների և մոտեցումների հետ, որպեսզի ավելի տեղյակ լինեն, թե ինչպես են նրանք ձևավորում իրողությունը:

- **Վերլուծություն.** նմանությունների և տարբերությունների ետևում դրված են առանձին աշխա-տակարգերի, մտքերի, արժեքների և համոզմունքների բացատրությունները: Ուսուցիչները կարող են օժանդակել սովորողներին, որպեսզի վերջիններս վերլուծեն այն ամենն, ինչ կարող է ընկած լինել այլոց արածի ու ասածի մեջ և նրանց տեսածի հիմքում: Սրան կարելի է հասնել, օրինակ՝ հանգամանալից քննարկման և վերլուծության միջոցով՝ հարցումների վրա հիմնած մեթոդներով կամ գրավոր կամ ձայնա/տեսա աղբյուրների միջոցով: Այնուհետև կարելի է թույլ տալ, որ սովորողները մտազննեն այս վերլուծությունը՝ իրենց իսկ աշխատակերպերի, արժեքների և համոզմունքների վերաբերյալ հնարավոր հարցերի տեսանկյունից:

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

 Մտազննում (կամ հետահայաց վերլուծություն). համեմատումը, վերլուծությունն ու փորձա-ռությունը պետք է ուղեկցվեն մտազննման/ հետհայաց վերլուծությամբ ու քննական իմացությունն ու ընկալումը զարգացնելու համար տրված ժամանակով և տարածությամբ: Ուսուցիչները՝ հատկապես ոչ ֆորմալ և ֆորմալ կրթության դաշտում,պետք է երաշխավորեն, որ այդ ժամանակն ու տարածությունը տրվի մտածված ու պլանավորված ձևով: Օրինակ՝ուսուցիչները կարող են սովորողներին խնդրել քննարկել իրենց փորձառությունը, խրախուսել սովորողներին՝ վարել իրենց ուսանածի վերաբերյալ գրանցատետր, և գրել, նկարել, կիսվել կամ այլ կերպ արձագանքել իրենց սովորածին: Ծնողները ևս կարող են անաղմուկ նստել իրենց երեխաների հետ և խոսել նրանց փորձառության մասին:

 Գործողություն. մտազննումը կարող է և պետք է հիմք դառնա գործողություն ձեռնարկելու, մյուս-ների հետ երկխոսության մեջ մտնելու և մյուսների հետ համագործակցային աշխատանքների մասնակցելու համար: Ֆասիլիտատորները կարող են ստանձնել խրախուսելու և անգամ համագործակցային գործողությունը կառավարելու պատասխանատվություն, օրինակ՝ ,համադպրոցականե մոտեցումների կամ դպրոցական գործընկերությունների միջոցով բարելավելով սոցիալական և ֆիզիկական միջավայրը: Իրենց ամենօրյա պրակտիկայում ներառելով ժողովրդավարական վերաբերմունքի և վարքագծի մոդելավորում, օգտագործվում է նաև ժողովրդավարական մշակույթի կարողությունների արժեքները.

 Մարդու արժանապատվության և իրավունքների արժևորում,

 Ժողովրդավարության, արդարադատության, արդարության և իրավունքի գերակայության արժևորում,

 Այլ մարդկանց նկատմամբ ապրումակցում, հարգանք և դրական վերաբերմունք,

 Ոչ քննադատական ձևով լսելու ունակություն և դիտարկում,

 Բացությունն այլոց նկատմամբ,

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

- **Անորոշության երկիմաստության նկատմամբ հանդուրժողականություն:**

Ժողովրդավարական արժեքները, մոտեցումներն ու հմտությունները հնարավոր չէ յուրացնել միայն ժողովրդավարության մասին ֆորմալ դասավանդման միջոցով, այլ՝ հարկ է նաև գործնականում կիրառել դրանք: Սովորողները կզարգացնեն կարողությունների հետևյալ համախմբերը՝ փորձարկելով ժողովրդավարական գործընթացներ.

1. **ժողովրդավարության, արդարադատության, հավասարության, արդարության և իրավունքի գերակայության արժևորում,**
2. **Պատասխանատվություն և քաղաքական դիրքորոշում,**
3. **Հաղորդակցության, համագործակցության և հակամարտությունների լուծման հմտու-թյուններ,**
4. **ժողովրդավարության և քաղաքականության վերաբերյալ գիտելիք և քննադատական ընկալում:**

Այս գործընթացներին ներգրավվելով՝ սովորողները զարգացնում են կարողունակությունների համախմբեր.

- **մյուսների համոզմունքների և մտքերի նկատմամբ անաչառություն (բաց լինելը),**
- **սեփական գործողությունների համար պատասխանատվություն,**
- **ինքնուրույն սովորելու/ինքնակրթվելու հմտություններ,**
- **ապրումակցում ու մյուսների մտքերի, համոզմունքների և զգացմունքների նկատմամբ զգայունություն,**
- **ճկունություն ու հարմարվողականություն,**
- **համագործակցության հմտություններ,**
- **կոնֆլիկտների լուծման հմտություններ,**

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

 սեփական ես-ի քննադատաբար ընկալում:

Կախված ընտրված թեմայից՝ ժողովրդավարական մշակույթի կարողությունների մոդելում կարելի է զարգացնել նաև աշխարհաճանաչողության և քննադատական ընկալման տարրեր:
Կարողունակությունների ձևավորումը պայմանավորվում է որոշակի բնութագրիչներով.

Պատասխանատվություն- Ժամանակին հանձնում է պահանջվող աշխատանքը, հետևում է վերջնաժամկետներին ու ժամկերտներին:

Ինքնավստահություն- Հավատ է արտահայտում՝ հարցերը հասկանալու իր ունակության նկատմամբ, հավատ է արտահայտում, որ կարող է կատարել պլանավորած աշխատանքը:

Հանդուրժողականություն անորոշության երկիմաստության նկատմամբ
Ինքնուրույն սովորելու/ ինքնակրթության

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա - Հայոց պատմություն

Դասարան - XII

Թեմա - Անկախ պետականության կայացման գործընթացը

1. Հիմնական հարցեր.

· ՀՀ Անկախության հանրաքվեն, անկախության հռչակումը,

· Նախագահական համաժողովրդական ընտրությունները,

· ՀՀ Սահմանադրության ընդունումը /հիմնական դրույթները/,

· Հայոց ազգային բանակի կազմավորումը:

2.Նպատակը և խնդիրները.

Իմանա _ Սովորողը պետք է համակողմանի տեղեկություններ ստանա անկախության գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև վեր հանի նրա շարժիչ ուժերը /քաղաքական իրավիճակը ԽՍՀՄ- ում 1980-ական թթ. վերջին, Արցախյան շարժում /,

Կարողանա _ Գնահատել Անկախության կերտման հիմնական փուլերը /Անկախության հռչակագրի ընդունումը, անկախության հան րաքվեն, ՀՀ անկախության հռչակումը/, ինչպես նաև պետականության կայացման

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

ճանապարհին ունեցած հիմնական ձեռքբերումները,

Գիտակցի _ Անկախացման գործընթացի էությունը, նրա համահայկական և համաժողովրդական բնույթը,

Ձևավորի _ Պետականության և պետության նկատմամբ հավատ,վստահություն՝ հայրենաճանաչության և հայրենապաշտության գաղափարների ամբողջացման և ամրապնդման միջոցով,

Արժևորի _ ՀՀ Անկախության պատմական նշանակությունը, ՀՀ III հան բապետության կայացման գործընթացի կարևորագույն նվաճումները / Սահմանադրության ընդունումը, Ազգային բանակի կազմավորումը, ժողովրդավարության հաստատումը /

3.Հիմնական հասկացությունները, առանցքային գաղափարները.

Անկախության հռչակագիր, անկախության հանրաքվե, համաժողովրդական ուղղակի, այլընտրանքային ընտրություններ, Սահմանադրություն, Ազգային ժողով, մարզ, Պաշտպանության պետական կոմիտե, Հայոց ազգային բանակ, երկքաղաքացիություն, եռաստիճան դատական համակարգ:

4. Ուսումնադիտողական պարագաներ. Դասագիրք, պատմության տետրեր, քարտեզներ, նկարներ (Լ. Տեր-Պետ ռոսյան, Վ. Սարգսյան, Ս. Սարգսյան և այլոք), գծակարգեր, աղյուսակներ, ՀՀ Սահմանադրությունը, փաստավավերագրական ֆիլմ /Անկախության հռչակման, բանակի ձևավորման դրվագներով /:5.Ներառարկայական, միջառարկայական կապեր.Հայոց պատմություն IX, Հայկական հարցի պատմություն X, Համաշխարհային պատմություն IX , Համաշխարհային պատմություն XII, ՆԶՊ, Հասարակագիտություն IX, Հայաստանի աշխարհագրություն:

6. Դասատիպը.

Նոր նյութի ուսումնասիրման դաս:

7.Ուսուցման մեթոդներ և հնարներ.

Գծակարգեր, մտքերի քարտեզագրում, ինտերակտիվ մեթոդ, շարադրանք, էվրիստիկ զրույց, T-աձև աղյուսակ, աշխատանք սկզբնաղբյուրով, բանավեճ:

1,Հանրակրթական պետական չափորոշիչ

2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ներածական մաս. – աշակերտների ուշադրության գրավում,

/ խթանում / – հետաքրքրությունների ստեղծում,ծանոթացում դասնյութին, խնդիրներին նպատակներին,

– ակտիվացում, խթանում:

Անց է կացվում ինտերակտիվ հարցուպատասխան՝ հիմնված աշակերտների ունեցած գիտելիքների վրա: Համառոտ շարադրանքի միջոցով ներկայացվում են դասանյութի առանցքային խնդիրները:

Հիմնական մաս.

/իմաստի ընկալում / – ուսուցանվող նյութի բովանդակության ու սումնասիրում և հետազոտում:Մտքերի քարտեզագրման միջոցով վեր են հանվում անկախության կերտման հիմնական օղակները, պետականության հաստատման գործընթացի փուլերն ու օրինաչափությունները: Կատարվում է խմբային աշխատանք: Քննարկվում հոդվածներ ՀՀ Սահմանադրությունից, վերլուծվում են նրա հիմնարար սկզբունքները: Ներկայացվում են դրվագներ ֆիլմից / Անկախության հռչակագրի ընթերցումը, բանակի կազմավորումը/:

Ամփոփում.

/կշռադատում / – արդյունքների վերլուծություն,

– հետադարձ կապի ապահովում,

– հետագա անելիքների հստակեցում:

Անց է կացվում էվրիստիկ զրույց, որի միջոցով ամբողջացվում են սովորողների ձեռք բերած գիտելիքները: Միաժամանակ վերստին կարևորվում է ՀՀ պետականության հաստատումը, ազգային բանակի կազմավորումը:

Տնային առաջադրանք. Հանձնարարվում է ուսումնասիրել դասանյութը/ դաս 1./, տրվում է խմբային աշխատանք՝ զեկուցումների պատրաստում ըստ հետևյալ թեմաների.

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

- **ՀՀ պետականության կերտման գործընթացը,**
- **Անկախության հռչակման պատմական նշանակությունը,**
- **Ազգային բանակը՝ պետության ամրապնդման գրավական:**

Տրվում է անհատական աշխատանք.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ժողովրդավարության հիմնարար արժեքներն են՝

- արդարություն,
- օրենքի և իրավունքի գերակայություն,
- հանդուրժողականություն,
- առաջնորդություն:

: Ուսուցչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա) գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
բ) հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ) գիտակցի, որ գիտությունը, արդիական՝ տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ) կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

ե) գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

զ) գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

է) հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդ-ների ներկայա-ցուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ը) անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումն ու գերագնահատումը,

թ) դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

:

Ժողովրդավարական կարողունակության արժեքները իրավասությունների համառոտ ցանկ է, որը հնարավորություն է տալիս անհատին արդյունավետ և համապատասխան մասնակցություն ունենալ ժողովրդավարության մշակույթում:

1,Հանրակրթական պետական չափորոշիչ
2.Ա.Ղուկասյան 6-8րդ դասարանների հայոց պատմ. ձեռնարկ , 3. Համացանց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1, Հանրակրթական պետական չափորոշիչ 2021թ

2. Հայոց պատմություն 6-7 ուսուցչի ձեռնարկ Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան 2013թ

3. Համացանց